

ժանկամեռի: Ընդունայն եղեն խոնեալ կանայք՝ խառնեալ բոլորապար քան զգլուխ իմ ի վեր, ողբաձայն զեղեալն ի գերեզմանի թէ զնուաղեալն առ ոտին. այլ ազգաց կանգնիլն ի դիտանոցի՝ շարժելով զգլուխս գառնայլն յատենաբանութիւն յալլեալ լեզուս ի գառնակսկիծ աւուրսն եւ եւս. եւ զոչինչ գտի էնֆազի միջաբեկ՝ ի բնակութիւնս մեր դարձուցանէին իբրեւ զսանտի/տոնն գատարկ:

Որպէս ամենայն ինչ աշխարհայնոյս գրաւական տուեալ մեզ, նոյնպէս եւ մարմին չէ սեպհական եւ հողի մեր եւս առժամայն մեզ: Մարմին դարձեալ ի հող մխի՝ ըստ վճռի Արարչին, եւ հողին յայլ տեղի սլացուցանեն, ուր նախասահմանօղն պատրաստէ որ ետ զնա. եւ այս ամենայն ի փառս էին որ ինքն միայն կայ եւ մնայ յաւիտեան, եւ մեք իբրեւ զձորձս մաշեալ, հնացեալ, ի վախճանի ի հող լուծեալ: Եւ թէ ըստ բնականին կարճեաց, զի Հազար ամք յաչս Տեառն որպէս մի օր ասի, եւ՝ Որպէս զանասուն համարեցայ, եւ հարկելի ի մէնջ օրհնութիւն: Եւ թէ պատահական՝ վա՛յ 'ւ եղ՞՛ւկ է ինձ դարձեալ, զի Ո՞ զիտաց զմխտս Տեառն եւ ո՞վ եղեւ նմա խորհրդակից. եւ պահանջելի է ի մէնջ դարձեալ գոհաբանութիւն: Եւ պատահասական աւաղելի եւ կսկծելի, զի ասէ. Ո՞ խորք մեծութեան եւ իմաստութեան, զի անքննելի դատաստանք նորա: Եւ պարտական եմք դարձեալ շնորհակալութեան, զի աստ ոչ անխայեաց ի կենցաղումս զկեան[ս] նորա աւարտեալ, եւ Տեառն է երկիր լրիւ իւրով եւ ամենայն բնակիչք նորա, եւ՝ Յոյժ խոր են խորհուրդք նորա, զի սրբոց եւ անսրբոց պատահեցաւ եւ զպատճառն ոչ ոք ծանեաւ: Իսկ եթէ նախախնամական՝ առաջի մեր եւ բարիք գաւանութեամբ եւ զղջական արտասուօք Գ աւուրբ յառաջ ինքնին զօրհնաբանական եւ զգոհութեան աղօթս ընթեռնոյր եւ ի